Մամլո հաղորդագրություն

Սեպտեմբերի 26, 2014 թ.,Երևան

Ոսկե բանալիների և ժանգոտ կողպեքի մրցանակակիրները հայտարարվեցին

2014թ. սեպտեմբերի 26-ին տեղեկատվության ազատության միջազգային օրը նշանավորելու համար արդեն 12-րդ անգամ Երևանում տեղի ունեցավ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի «**Ոսկե բանալի և ժանգոտ կողպեք»** ամենամյա մրցանակաբաշխությունը:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկան ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Թրայան Հրիսթեան և ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանը:

Մրցանակաբաշխության դրական մրցանակը՝ Ոսկե բանալին՝ որպես բաց և հրապարակային աշխատանքի խորհրդանիշ, շնորհվեց հետևյալ անձանց և կազմակերպություններին.

- Ամենաբաց գերատեսչություն, որը լավագույնս է կիրառում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, ճանաչվեց ՀՀ **Արմավիրի մարզպետարանը**
- Տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք ճանաչվեց **ՀՀ Ոստիկանության www.police.am**
- ԲԿԳ Հայաստանյան գործողությունների ծրագրի հանձնառությունները լավագույնս իրականացման համար Հատուկ մրցանակտրվեց **ՀՀ Տարածքային կառավարման նախարարությանը**
- Տեղեկություն ստանալու իրավունքն ամենաակտիվ և լավագույնս օգտագործած հասարակական կազմակերպություն ճանաչվեց **Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ-ն**
- Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները հետևողական լուսաբանած լրագրող/լրատվամիջոց ճանաչվեց **Հայաստանի Հանրային ռադիոն**
- «Տեղեկատվության ազատության մասին» օրենքն ամենաակտիվ օգտագործող լրագրող/լրատվամիջոց **Yerkir.am**
- Տեղեկություն ստանալու իրավունքը լավագույնս կիրառած փաստաբան ճանաչվեց **Իրավապաշտպան Կարեն Մեժլումյանին**

Մրցանակաբաշխության բացասական խորհրդանիշը՝ Ժանգոտ կողպեքը, որպես փակ աշխատանքի խորհրդանիշ տրվեց.

- **Կադաստրի պետական կոմիտեին՝** որպես քաղաքացիների տեղեկություն ստանալու հարցումներին ամենադանդաղ պատասխանող մարմին,
- **Հայաստանի Տնտեսագիտական համալսարանին՝** որպես 2014թ. ամենազավեշտալի պաշտոնական պատասխանի հեղինակ մարմին.

Մրցանակաբաշխության արդյունքները որոշել է ոլորտում գործող7 հասարակական կազմակերպու-թյունների ներկայացուցիչներից բաղկացած անկախ ժյուրին:
Հրապարակային և փակ գերատեսչությունների ընտրության չափանիշներին կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի ինտերնետային կայքում՝ http://www.foi.am/hy/award-standards/: Նախորդ տարիների արդյունքներին կարող եք ծանոթանալ՝ http://www.foi.am/hy/awards-winners/:

ՏԱ ամենամյա մրցանակաբաշխությունը կազմակերպվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ "Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում" ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվում է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկեր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագրի տևողությունը 36 ամիս է. այն մեկնարկել է 2014 թ.-ի հունվարից և կավարտվի 2016 թ.-ի դեկտեմբերին: Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացան(ՀԵԻԱ)հիմնադրվել է 1995 թվականին: Առաքելությունն է նպաստել Հայաստանում օրենքի գերակայության և ժողովրդավարության հաստատմանը և քաղաքացիական հասարակության ձևավորմանը, ուր մարդիկ իրազեկ են իրենց իրավունքներին և իրենց իրավունքները պաշտպանված են:

Ինֆորմացիայիազատությանկենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելիքան 10 տարի՝ 2001 թվականից: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը:

Լրացուցիչտեղեկություններիհամարկարողեքկապվել՝

ՇուշանՌոյդոյան - ԻԱկնախագահ, Ծրագրիղեկավարիտեղակալ, ենթադրամաշնորհներիհամակարգող:
Աշխատանքայինօրերին՝ 9:00 – 18:00, 560-360 հեռախոսահամարով
Էլ. փոստ՝ foi@foi.am
Website: www.foi.am

Հայաստանիերիտասարդիրավաբաններիասոցիացիա
Հասցե: ՀՀ, Երևան 0010, Նալբանդյան 7, բն 2
Հեռ. ՝ +37410 54 01 99
Ֆաքս. +37410 58 02 99

Ինֆորմացիայիազատությանկենտրոն
Հասցե՝ ՀՀ, Երևան 0010 Բուզանդի 1/3
Հեռ. +37410 56 03 60
Ֆաքս +37410 56 03 60

Ծրագիրըֆինանսավորվում է Եվրոպականմիությանկողմից

Հայաստանում ԵՄ պատվիրակություն
Հեռ. +37410 54 64 94
Ֆաքս.+37410 54 64 95

Եվրոպական հանձնաժողովը ԵՄ-ի գործադիր մարմինն է:

"The European Union is made up of 28 Member States who have decided to gradually link together their know-how, resources and destinies. Together, during a period of enlargement of 50 years, they have built a zone of stability, democracy and sustainable development whilst maintaining cultural diversity, tolerance and individual freedoms. The European Union is committed to sharing its achievements and its values with countries and peoples beyond its borders".